

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Սերժ Սարգսյանը շնորհավորել է Վլադիմիր Պուտինին ՌԴ նախագահի ընտրվելու առիթով



Նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Վլադիմիր Պուտինին՝ Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:



«Հարգելի՛ Վլադիմիր Վլադիմիրի, Հայաստանի ժողովրդի և անձամբ իմ անունից անկեղծորեն և սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ Ռուսաստանի Դաշնության նախագահի ընտրվելու կապակցությամբ:

Նախագահական ընտրություններում Ձեր տարած համոզիչ հաղթանակը վկայում է Ռուսաստանի համակողմանի զարգացմանը, երկրի բարեփոխմանն ու արդիականացմանը, համաշխարհային գլոբալ գործընթացներում նրա դերակատարության և ազդեցության էլ ավելի բարձրացմանն ուղղված Ձեր կողմից իրականացվող քաղաքականության նկատմամբ ռուսաստանցիների լայն և բազմաձև աջակցության մասին:

Հայաստանին և Ռուսաստանին միավորում են դաշնակցային հարաբերությունները, որոնք հիմնված են մեր երկրների եղբայրական ժողովուրդների ժամանակի փորձությունն անցած բարեկամության վրա:

Վերջին տարիներին հայ-ռուսական համագործակցության զարգացման մեջ ձեռք են բերվել նշանակալի արդյունքներ, ստեղծվել է էական պաշար ապագայի համար: Եվ դրանում անգնահատելի է Ձեր անձնական ներդրումը:

Վստահ եմ, որ մեր երկկողմ ռազմավարական փոխգործակցության հետագա զարգացումն այսուհետև ևս կծառայի Հայրավային Կովկասում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը, թույլ կտա ոչ միայն իրականացնել երկարաժամկետ նախագծեր տնտեսության մեջ, միջտարածաշրջանային համագործակցության ոլորտում, մշակութային-հումանիտար բնագավառում, այլև բացահայտել միջպետական համագործակցության նոր հնարավորություններ:

Հարգելի՛ Վլադիմիր Վլադիմիրի, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակի տարում հրավիրում եմ Ձեզ այցելել Հայաստան պետական այցով: Անկասկած, Ձեր այցը նոր խթան կհաղորդի բոլոր ուղղություններով հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների զարգացմանը՝ ի շահ մեր երկրների ժողովուրդների:

Մաղթում եմ Ձեզ, հարգելի՛ Վլադիմիր Վլադիմիրի, քաջառողջություն և նոր հաջողություններ բարձր պետական պաշտոնում, իսկ Ռուսաստանի եղբայրական ժողովրդին՝ բարգավաճում և բարեկեցություն»:

Համո ՍԱՀՅԱՆ

ԳԼՐՈՒՆ Է ԳԼԼԻՍ

Ծիլերն են դաշտում կանաչին տալիս, Դռները բացեք, գարուն է գալիս: Զմեռը հալվել, դարձել է առու, Դարձել է առու, դարձել է վտակ, Արաքսի հունով գնում է հեռու, Գնում է դեպի ծովը անհատակ:

Հոգնած թևերը քսելով ամպին, Կրծքին դեռ խոնավ ծվենը նրա, Արագիլն իջել Արաքսի ափին, Հանգստանում է մի ոտքի վրա:

Ժպտալուց առաջ բողբոջն է լալիս, Դռները բացեք, գարուն է գալիս:

Աղբյուրներն ուրախ իրար են կանչում, Իրար են փարվում հովերն արթնացած, Ծաղկունքի բույր է հողն արտաշնչում,

Մեղուն քանդում է ակնամոմը թաց:

Մեղուն ուզում է դուրս գալ ու թռչել, Խաղալ է ուզում արևի շողով, Ուզում է իր նուրբ թևերը թրջել երազում տեսած ծաղկունքի ցողով:

Ողջ բնությունն է հրձվանքից լալիս, Դռները բացեք, գարուն է գալիս:



Ծիծառներն անցնում փարախի կողքից ել պատուհանի փեղկին են դիպչում, Իսկ գառը ներսում արևի շողքից խրտնել, անկյունից անկյուն է թռչում:

Կանգնել է ներին փարախի դռան՝ Հեռու լեռների երազն աչքերում, Եղվել է հովվի սիրտը անվարան՝ Զորս պատերի մեջ էլ չի համբերում:

Լեռներն իրարու ողջույն են տալիս, Դռները բացեք, գարուն է գալիս:

Հողն է մայրության հրձվանքից դողում, Թող որ հավիտյան ազատ լինի նա, Թող որ ոչ մի ծիլ չմնա հողում, Ոչ մի հավքի բույն թափուր չմնա:

Երկինք ու երկիր մեզ ծայն են տալիս, - Դռները բացեք, գարուն է գալիս...

1950 թ.

Գիտաժողով ԸԸ ԳԱԱ-ում՝ նվիրված հայ-իրանական 20-ամյա համագործակցությանը

Մարտի 13-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և Երևանում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի Հայաստան-Իրան դիվանագիտական փոխհարաբերությունների հաստատման 20-ամյակին նվիրված «Հայ-իրանական 20-ամյա համագործակցության ճանաչարհով» թեմայով գիտաժողով: Այն կազմված էր երկու՝ պաշտոնական բացման և գիտական մասերից:

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, ով կարևորեց երկու երկրների փոխհարաբերություններն ու դրանց բազմակողմանի ընդլայնման անհրաժեշտությունը: Այնուհետև ելույթ ունեցավ ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Սեյյեդ ալի Սադախյանը: Նա, Իրան-Հայաստան փոխհարաբերությունները սերտ և բարեկամական զննատեսելով, շեշտեց, որ Իրանի Իսլամական Հանրապետությունն իր հիմնադրման օրվանից որդեգրել է հարևան երկրների հետ բարիդրացիական փոխհարաբերություններ հաստատելու քաղաքականություն: Դեսպանը կարևորեց նաև Հայաստանի դերը որպես կապող օղակ իսլամական աշխարհի ու քրիստոնեության միջև:



ՀՀ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանն իր ողջույնի խոսքում շեշտեց, որ երկու երկրների միջև մշակութային կապերը զարգանում են առավել դինամիկ՝ նե-

րառելով մշակույթի բոլոր բնագավառները: ՀՀ էներգետիկայի փոխնախարար Արա Սիմոնյանը, անդրադառնալով էներգետիկայի ոլորտում երկու երկրների փոխհարաբերություններին, Իրան-Հայաստան գազատարի կառուցումը համարեց Հայաստանի էներգետիկ անվտանգության կարևոր գործոն, հավելեց նաև Մեղրիի հէկ-ի կառուցման կարևորության մասին: ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը, ով բարձր գնահատեց Իրանի աշխարհաքաղաքական դիրքը և նրա դերը տարածաշրջանում, անդրադարձավ ինստիտուտում տասնամյակների ընթացքում իրանագիտական ոլորտի ուսումնասիրություններին ու ձեռքբերումներին:

Պաշտոնական մասի ավարտին Իրանի դեսպանը ոսկե մեդալով ու պատվոգրերով պարգևատրեց արևելագիտության ինստիտուտի իրանական բաժնի վարիչ, Իրանում Հայաստանի առաջին դեսպան Վահան Բայբուրդյանին և նույն բաժնի ավագ գիտաշխատող, գրականագետ, պրոֆ. Արամանուշ Կոզմոյանին:

Գիտաժողովում կարդացվեցին մի շարք ուշագրավ զեկուցումներ: Ելույթ ունեցողները և կազմակերպիչները պարգևատրվեցին շնորհակալագրերով:

Էմմա ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Այս և մյուս միջոցառումները նպաստել են Սևանում ջրի որակի լավացմանը: ՀՀ ԳԱԱ ԿՀԵԳԿ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կողմից վերջին տարիներին իրականացված համալիր հետազոտությունները ցույց են տվել, որ լճում ջրի հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական ցուցանիշների արմատական փոփոխություններ չեն նկատվել: Ավելին, ամռան ամիսներին (հուլիս, օգոստոս) գրանցվել է լճի ջրի բավականին բարձր լուսաթափանցելիության ցուցանիշ (մինչև 12 մ), ինչը բնորոշ է եղել Սևանա լճին մինչև մակարդակի իջեցումը: Պարզ է, որ միայն մեկ սեզոնի ընթացքում գրանցված ցուցանիշների հիման վրա խոսել լճի ջրի որակի լավացման մասին դեռ վաղ է, քանի որ վիճակի գնահատման համար պահանջվում են առնվազն մի քանի տարիների մոնիտորինգային կանոնավոր դիտարկումների

դականին Սևանա լճի տարածքում ձկնարդյունահանմամբ զբաղվել ցանկացող սուբյեկտների հետ համատեղ քննարկել Սևանա լճում արդյունազորական ձկնորսության կարգի նախագիծը և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետ Ս. Սարգսյանին:

* Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը և ՀՀ բնապահպանության նախարարությունը մշակել են «2010-2013 թվականներին Սևանա լճում ձկան արդյունազորական որսի արգելման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Որոշման նախագիծը դեռևս չի քննարկվել: Բացի այդ մշակվել և ՀՀ բնապահպանության նախարարի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի և ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվել է «Սևանա լճում ձկան և խեցգետնի որսի արգելման ժամանակահատվածում /2011թ. նոյեմբերի 28-

Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության առաջարկությունների հիման վրա ՀՀ կառավարությունը 2011 թվականի օգոստոսի 4-ի նիստի արձանագրային որոշմամբ փոփոխություններ է կատարել ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի արձանագրային որոշման մեջ: ՀՀ կառավարությունը ուժը կորցրած է ճանաչել «ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի «Փոքր հիդրոէկետրակայանների զարգացման սխեմային հավանություն տալու մասին» N 3 արձանագրային որոշման 9-րդ կետով հավանության արժանացած փոքր հիդրոէկետրակայանների զարգացման սխեմայի հավելվածի «Սևանա լճի ավազան» բաժինը:

* Մշակվել է «Սևանի արդյունազորական և էներգետիկ ձկնատեսակների վերականգնման համալիր ծրագիրը», որը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը: ՀՀ կառավարությունը արդեն ընդունել է համապատասխան որոշում: Ծրագրում ներառված են արդյունազորական և էներգետիկ ձկնատեսակների պահպանման, ինչպես նաև բնական ու արհեստական վերարտադրության կազմակերպման գործնական միջոցառումներ:

Սևանա լճում իրականացվել են նաև էներգետիկ ձկնատեսակների պոպուլյացիոն և կենսաբանական ցուցանիշների հետազոտություններ: Ամառային բախտակի և գեղարքունու պոպուլյացիաների վերարտադրության պետական ծրագրի շրջանակներում 2006թ.-ից առ այսօր լիճ են բաց թողնվել մեծ քանակությամբ արհեստական աճեցված ձկնիկներ: Արդյունքում 2010թվականի համեմատ լճում սնման շրջանում 2011 թվականին նկատվել է իշխանի թվաքանակի զգալի աճ: Դրա հետ մեկտեղ ձկնային պաշարների բնական վերարտադրության բնագավառում լրջագույն թերություններ կան:

- Եվ վերջին հարցը. պարոն Մովսիսյան, եկեք ամփոփենք կամ, ավելի ճիշտ է՝ ի՞նչ կասեք հանձնաժողովի առաջիկա խնդիրների մասին:

- Արված դրական աշխատանքները մենք համարում ենք որպես Սևանա լճի հիմնահարցերի լուծման առաջին քայլեր: Առջևում դեռևս կան բավականին բարդ խնդիրներ, որոնք լուծումներ են պահանջում: Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը հնարավոր բոլոր միջոցներով առաջիկայում ջանքեր է գործադրելու գոյություն ունեցող դժվարագույն հիմնախնդիրները փուլ առ փուլ լուծելու համար: Հիմնականում շեշտը դրվելու է ջրի մաքրության ապահովման միջոցառումների իրականացման վրա: Հանձնաժողովը գտնում է, որ Սևանա լճի ափամերձ տարածքների մաքրումը շենք-շինություններից, անտառներից ու թփուտներից պետք է իրականացվի առաջացնող տեմպերով:

Հանձնաժողովը արդեն մշակել է և առաջիկա միստում կհաստատի Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2012 թ. աշխատանքային գործունեության ծրագիրը, որում ընդգրկված են Սևանա լճի բնական պաշարների պահպանմանը, վերականգնմանը և վերարտադրությանը ուղղված թվով 26 միջոցառումների մշակումն ու առաջարկությունների ներկայացումը:

- Շնորհակալություն հետաքրքիր հարցազրույցի համար և հաջողություն Ձեր կարևոր ծրագրերին:

Հարցազրույցը վարեց ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Սևանի պահպանությունը՝ գերխնդիր

«Գիտություն» թերթի հարցերին պատասխանում է ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր ՄՈՎՍԻՍՅԱՆԸ:

արդյունքներ: Սակայն արդեն այն փաստը, որ լճում բացասական երևույթներ դեռ չեն դրսևորվել, վկայում է այն մասին, որ լճի ջրի մակարդակի բարձրացման դրական ազդեցությունը գերակշռող է դարձել էկոհամակարգում ընթացող էվորոֆագման բացասական երևույթների նկատմամբ:

- Պարոն Մովսիսյան, հայ հանրությանը շատ է մտահոգում Սևանա լճում ձկնային պաշարների նվազման և անգամ վերացման սպառնալիքը: Ինչպես տեղյակ ենք, դրանք գրեթե սպառնվում են: Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ պետք է արվի վիճակը փրկելու համար:

- Ձկնային պաշարների պահպանության և վերարտադրության ուղղությամբ, անշուշտ, որոշակի միջոցառումներ իրականացվել են, բայց դրանք մեզ չեն գոհացնում:

* Մշակվել է «Սևանա լճում արդյունազորական ձկնորսության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի խնդրանքով 04.10.11թ. քննարկվել է ՀՀ վարչապետ Ս. Սարգսյանի մոտ: Հանձնարարվել է Գեղարքունիքի մարզպետին, ՀՀ բնապահպանության նախարարին, Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահին և ՀՀ վարչապետի խորհր-



ից մինչև 2011 թ. դեկտեմբերի 28-ը/ իրականացվող միջոցառումների ծրագիրը»:

* «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից դեռևս 2010թ. ավարտվել են Սևանի հէկ-ի ձկնապաշտպան կառույցի պատվարի միջերի բարձրացման աշխատանքները 1222 մլն դրամ արժեքով:

* Սևանի ավազանի գետերի վրա հիդրոտեխնիկական կառույցների, մասնավորապես ՓՀԵԿ-երի ազդեցության, դրանց հնարավոր բացասական հետևանքների վերացման նպատակով հանձնաժողովը առաջարկել էր գերծմնալ ձկների ձվադրավայր հանդիսացող գետերի վրա (Մասրիկ, Կարճաղբյուր, Ձկնագետ, Կարդենիկ, Արգիճի, Լիճք, Ծակքար և Գավառագետ) նոր ՓՀԵԿ-երի կառուցումից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

գիտնականը պետք է՝

1. լինի ՀՀ քաղաքացի
2. լինի մինչև 35 տարեկան (ծնվ. 1977թ. հունվարի 1-ից հետո)
3. աշխատի ՀՀ որևէ գիտական կամ կրթական հաստատությունում
4. ներկայացնի Ազդեցության գործակից ունեցող ամսագրերում 2010 և 2011 թթ. ընթացքում տպագրված այն հոդվածները, որոնցում նշված է ՀՀ-ում իր աշխատավայրը:

Ե2012 թ. մրցույթը հայտարարվում է ֆիզիկայի ու լորտում 2010 և 2011 թվականների ընթացքում տպագրված գիտական աշխատանքների համար:

Մրցանակաբաշխությունն իրականացնում է ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամը»: Ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը կարելի է ստանալ ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» գրասենյակից կամ Հիմնադրամի կայքէջի միջոցով <http://sdfund.sci.am>.

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 2012 թ. մարտի 1-ից մինչև մարտի 31-ը: Արդյունքները կամփոփվեն մինչև 2012 թ. ապրիլի 30-ը:

Հասցեն: 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24, Երևան, Հայաստանի Հանրապետություն:

Հեռ. + (37410) 527530, + (37410) 527031:

Մրցույթին ներկայացվող փաստաթղթերի ցանկը.



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան (ՀՀ ԳԱԱ) սահմանում է երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) գիտական աշխատանքների «Ակադեմիա» ամենամյա մրցանակաբաշխություն:

Յուրաքանչյուր տարի մրցույթը կհայտարարվի գիտության որոշակի ոլորտի աշխատանքների համար և նախատեսված է Ազդեցության գործակից (Impact Factor) ունեցող գրախոսվող գիտական ամսագրերում հրապարակված գիտական աշխատությունների (շարքի) համար, որոնք հրապարակվել են երիտասարդ հեղինակների կողմից մրցույթին նախորդող երկու տարիների ընթացքում:

Հաղթող է ճանաչվելու գումարային ամենաբարձր Ազդեցության գործակից ունեցող հոդվածների հեղինակը: Մրցանակակիրը կստանա ՀՀ ԳԱԱ դիպլոմ և դրամական պարգև՝ 750.000 ՀՀ դրամի չափով:

Մրցանակաբաշխությանը մասնակցող երիտասարդ

1. հայցողի դիմում-հայտը,
 2. անձնագրի և սոցիալական քարտի պատճենը,
 3. կենսագրական տվյալները (resume/CV),
 4. մրցանակի ներկայացվող աշխատանքը,
 5. բանկային անձնական հաշվի համարը
- Մրցանակաբաշխության արդյունքները Հիմնադրամը ամփոփելու է ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի և ֆեյսբուքյան նախաձեռնության հետ համատեղ: Հայտի հետ միասին անհրաժեշտ է, որ հեղինակները Հիմնադրամ ներկայացնեն էլեկտրոնային տարբերակը՝ sd_fund@sci.am, ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի egx@sci.am հասցեներով և տեղադրել ֆեյսբուքյան <http://www.facebook.com/science.and.finance> էջում հետևյալ ձևաչափով.

1. Անուն, ազգանուն, հայրանուն
2. Ծննդյան ամսաթիվ և տարեթիվ
3. Գիտական աստիճան (բակալավր, մագիստրոս, ասպիրանտ, գիտության թեկնածու, գիտության դոկտոր)
4. Աշխատանքի վայր
5. Էլ. փոստ, հեռախոս
5. Ներկայացվող հոդվածների ամբողջական հղումները (Հեղինակ, Վերնագիր, Ամսագիր, Հատոր, էջ (Տարեթիվ)):

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ
ԳԱՍ սփյուռքի բաժինը

**ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, դոկտոր, պրոֆեսոր
Ռեյմոն Գևորգյանի ողջ կենսագրությունը գիտության
նվիրյալի փալուռն օրինակ է:**

Ռեյմոն (Հարություն) Գևորգյան



Ռեյմոն (Հարություն) Գևորգյանը ծնվել է 1953թ. փետրվարի 22-ին, Ֆրանսիայի ծովափնյա Մարսել քաղաքում: Նրա պապիկը և տատիկը գաղթել են Արևմտյան Հայաստանից 1922-23թթ.՝ իրենց հայրենի տունը թողնելով Խարբերդում ու Սեբաստիայում, և ապաստան գտել Ֆրանսիայի նշանավոր Մարսել քաղաքում:

Ռեյմոն Գևորգյանը ուսում է ստացել Սևր քաղաքի Մխիթարյան վարժարանում, այնուհետև որոշել է առավելապես խորանուխ լինել պատմության հարցերի մեջ: 1970-ականների վերջերին նա արդեն Սորբոնի համալսարանի ասպիրանտ էր և աշխատում էր իր գիտական ատենախոսության վրա, որն էլ պաշտպանեց 1980թ., «Հայկական տպագրության սկիզբը և Արևմուտքը (1512-1696)» խորագրով, և արժանացավ պատմական գիտությունների դոկտորի աստիճանի:

1981 թվականից պաշտոնավարե-

լով Ֆրանսիայի ազգային գրադարանում՝ նա ստեղծեց հայկական բաժին: Այդ պաշտոնում Գևորգյանը մնաց մինչև 1997թ.: Միևնույն ժամանակ նա իրականացնում է մանկավարժական գործունեություն: 1984-1998թթ. Արևելյան լեզուների ինստիտուտում Ռեյմոն Գևորգյանը մեծ ոգևորությամբ ու ներշնչանքով հայոց պատմություն էր դասավանդում:

Ռեյմոն Գևորգյանի անձնական նախաձեռնությամբ Ֆրանսիայում իրականացվել են մի շարք ցուցահանդեսներ, որոնք բացառապես վերաբերել են հայությանը: 1988թ. Մարսել քաղաքում կազմակերպվեց «Հայաստանի երեք հազարամյա պատմություն», 1996թ. Փարիզում, Ֆրանսիայի ազգային գրադարանում՝ «Հայաստանը Արևելքի և Արևմուտքի միջև», Փարիզի թանգարանում՝ «Ամի-1000-ամյա մայրաքաղաք» խորագրով մեծ և տպավորիչ ցուցահանդեսները:

Ռեյմոն Գևորգյանը առաջին անգամ

Մայր Հայաստան եկավ ողբերգական երկրաշարժից հետո՝ 1989-ի փետրվարին, որպես SOS-Armenie (Օգնություն Հայաստանին) կազմակերպության համակարգող:

1999թ. Ռեյմոն Գևորգյանը արժանացավ պրոֆեսորի կոչման Փարիզ 3-ի Սորբոն նովել համալսարանում: Նրա ուսումնասիրությունների և հետազոտությունների բնագավառը Հայ ժողովրդի XVI և XVII դարերի պատմու-

մասնավորապես Մատենադարանի, Պատմության թանգարանի հետ, որտեղ կազմակերպել է մի շարք ուշագրավ ցուցահանդեսներ:

ՀՀ ԳԱՍ պատմության ինստիտուտի, ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի հետ Ռ.Գևորգյանը իրականացնում է հետազոտական բազմաթիվ ծրագրեր: Վերջին տարիներին Ռեյմոն Գևորգյանի հրավերով մագիստրոսական և դոկտորական աշխատանքներ կատարելու համար Փարիզի համալսարան են գործուղվել հայ երիտասարդ հետազոտողներ, որոնց գիտական ղեկավարումը ստանձնել է հայ մեծանուն գիտնականը:

Ռեյմոն Գևորգյանը հայագիտական զեկուցումներով հանդես է եկել Ֆրանսիայում, Հայաստանում և միջազգային տասնյակ գիտաժողովներում, հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների և հոդվածների:

Նա անդամակցում է Աշխարհագրական ընկերությանը (Փարիզ), Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցությանը:

Հաշվի առնելով Ռեյմոն Գևորգյանի գիտական և մանկավարժական մեծ վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ: Ռեյմոն Գևորգյանը այսօր ևս մեծ ջանքեր է ներդնում հայագիտության զարգացման գործում և սերտորեն համագործակցում Հայաստանի գիտական կառույցի հետ:

2009թ. նա պարգևատրվել է Արվեստի և գրականության ասպետի կոչմամբ (Ֆրանսիական պետական մրցանակով), իսկ 2011թ. Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Ռեյմոն Գևորգյանը արժանացավ մրցանակի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ունենալու համար:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների

թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժնի գիտաբար-

տուղար

Գիտնականները յուրացրին տելեպատիան (պայծառատեսությունը)

Եվ այսպես, ստեղծվել է սարք, որի օգնությամբ առաջին անգամ հաջողվեց կարդալ մտքերը:

Նեյրոկենսաբանները ավելի ու ավելի են մոտենում այն մեթոդներին, որոնց օգնությամբ նրանք ուղղակի հաղորդակից կդառնան մարդու մտքերին...

Իսկ դրանք՝ այդ մտքերը, բնավորված են մեր ուղեղի հատուկ հատվածում՝ թունքի վերևի անկյունում: Դա լսողական համակարգի մի մասն է, պատասխանատուն այն ֆունկցիայի, որ մենք ծայրերի հոսքից պեղում ենք ինչ-որ միտք, տարբերակում բառերը և հասկանում դրանց իմաստը:

Ապա հենց այդ տեղամասն են մտել կալիֆոռնիական Բերկլիի համալսարանի գիտնականները:

Տեսականորեն փորձի համար հիմք է ծառայել նախկինում արված այն հայտարարությունը, երբ ինչ-որ բառ «երևակայելիս» ակտիվանում է գլխուղեղի հենց այն նույն հատվածը, ինչը տեղի է ունենում բառի արտասանության ժամանակ:

Փորձին մասնակցեցին 15 մարդ. նրանցից ամեն մեկի գանգի մեջ մտցվեց 256-ական էլեկտրոդ: Եվ ապա, էլեկտրաէնցեֆալոգրամի միջոցով սկսեցին որսալ էլեկտրական այն ազդանշանները, որոնք արձակում է ուղեղը, երբ մարդ մտածում է: 24՝ որ ամեն անգամ չար-



տասանված բառին համապատասխանում է ուղեղային իմպուլսների յուրահատուկ մի ամբողջություն:

Վերծանելով թունքի հատվածում առաջացած էլեկտրաիմպուլսների քառասյին հոսքը՝ հետազոտողները գտան հիմնական հաճախությունները, որոնք տարբերակում են տվյալ խոսքի հնչյունները մյուսներից: Եվ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով նրանք գտան այն բառերը, որոնք «հնչել են» փորձարկ-

վողի գլխում:

- Մենք արձանագրված ուղեղային իմպուլսները նորից վերածեցինք ծայրային ալիքների, բացատրում է հոգեբանության և նեյրոլոգիայի պրոֆեսոր Ռոբերտ Նայտը: Եվ մարդու մտքերը դարձան լսելի՝ շրջանցելով ծայրային ապարատը: Բառը, որը «արտասանել է» ուղեղը, դժվարությամբ, սակայն կարելի է լսել: Այնպես որ մարդու ներքին չբարձրաձայնած մենախոսությունները լսելը միանգամայն իրական է:

Գիտնականները այս հեղաշրջող տեխնոլոգիան համեմատում են այն երևույթի հետ, երբ դաշնակահարը նվագում է, իսկ մյուս դաշնակահարը ծայրամեկուսիչ ապակու միջով «լսում է» երաժշտությունը նվագողի մատների շարժումների միջոցով:

Իհարկե, նման հետազոտությունները նախատեսված չեն կրկեսային ներկայացումների համար: «Միտքը կարդալու» մեթոդը հնարավորություն կտա վերականգնել կարդալ անդամալույծ հիվանդի խոսքը: Հերիք է, որ խոսելու ընդունակությունից զրկված հիվանդը մտածի, թե ինչ է ինքը ասել, և նրա ցանկությունը անմիջապես կկատարվի:

Ճշմարիտ է, ծրագրի հեղինակները խոստովանում են, որ դեռևս հսկայական ջանքեր են պետք ուղեղի ծայրը ճանաչող տեխնիկան կատարելագործելու ուղղությամբ: Եվ, բացի այդ, գանգի մեջ վիթխարի քանակությամբ էլեկտրոդների տեղադրումը պետք է դարձնել անցավ: Այնպես որ, փորձիկ սարքը, որ վերծանում է միտքը, դեռևս շատ շուտ չի լինի:

Դմիտրի ՊՈՒՆԻՆԻՆ

(Սկիզբը՝ 2011 թ. N 12-ում և 2012 թ. N 1 և N 2-ում)
Նոր չարենցներ ու տերյաններ ծնելու հնարավորությունը կարող է երկնքից թափվող մանամայի պես փրկել մեզ, եթե հրաժարվենք մեր «անհավատությունից» և հետևենք հոգեղեն Արամյանի մատի ուղղությանը: «Դասական ուղղագրության անցնելը չափազանց դյուրին է, ընդամենը մեկ թերթ է՝ կանոն, և՛ բառեր պետք է սովորել. մեկ թերթ հանուն քո պատմության, հանուն քո անցյալի, հանուն քո ժողովրդի: Մեկ թերթի մասին է՝ զնուն խոսքը: Եվ մենք հրատարակել ենք: Ամոթ է դրա մասին խոսելը: Մարդիկ կարծում են, թե ինչ հեղաշրջումային փոփոխություններ պետք է տեղի ունենան: Ո՛չ, մեկ թերթ: Օտար լեզուներ սովորելու համար հատորներ են կուլ

թահարելով իրենց «ծուլությունը», մատները հասցնում են անհայտ խորխորատներ, հայտնագործում համակարգված ստեր, որ թափեն թշնամիների գլխին: Եվ ահա անանուն ու անհասցե, անգորագետ ու անտեղյակ «չակերտավոր ու թշնամի» մտավորականների գլխին հրաբխային լավայի տեսքով թափում են մեղադրանքներ՝ դուր բացելով ամեն կարգի նենգամտությունների ու զառանցանքների առաջ:

Սուտ առաջին: «Մեզ ստիպում են անցնել գրաբարին: Խեղճ հաջատուր Աբովյանը այդքան պայքարեց գրաբարի դեմ, հիմա ուզում են գրաբար սովորել»: Առաջին հարվածը հասցնում են հաջատուր Աբովյանին: «Սկսենք

եկող յ կամ վ հնչյունները հայոց լեզվի բացառություն չունեցող օրենքներից է և վերաբերում է իրենց իսկ ներկայացրած գնա-գնայի, աղա-աղայի, փաշա-փաշայի բառերին, որոնց բառավերջի յ-ն «մեծահոգորեն» չեն գրում: Այնուհետև՝ նրանք հիմնովին «ապացուցում» են, որ միայն դասական ուղղագրությամբ է տառերի թիվը, հետևաբար նաև ծախսերը պակասում: Քի՞չ բան է, երբ թյունի փոխարեն թիւն գրելով յ+ո+ւ երեք «տառի» փոխարեն գրում ենք իւ երկու տառով, կամ համբույր բառը համբույր գրելով՝ մի տառ խնայում ենք: Ել ի՞նչ են ուզում դասական ուղղագրությունից այդ թշնամիները: Նման սանձարձակ ու լկտի ածպարարություններով չբավարարվելով՝ հրապարակ են նետում նաև նորաթուխ մի սպառնալիք ևս: Նրանք «ըստ ամենայնի» պարզել են, որ եթե նվեր բառը մուր չգրենք, համակարգիչները պայթելու են կրախի առաջ կանգնեցնելով նաև միջազգային լեզվագիտությունը: Իսկ թե համակարգիչները ինչպես են դիմանում բառերի զանազան դիրքերում հաճախակի հանդես եկող այդ պայթուցիկ վ-երին ու չեն պայթում իրենց մասոնական գաղտնիքն է և սովորական մահկանացուներին անմատչելի:

Ուշիմ ընթերցողը պետք է նկատի, որ այդ խառնածուղովին մասնակից տիտղոսավոր լեզվաբանների կողքով համարյա չանցանք: Անցնեմք, որ ի՞նչ ասեինք տառերի խնայողությամբ ազգի հոգսերը թեթևացնող մեր գիտնականներին, ի՞նչ ասեինք մեր դոկտոր լեզվաբաններին, որ ուրանալով ուրանում են ու պարզ ծայնավորի գոյությունը մեր լեզվում, այն դարձնում ու և տառերով կազմված շաղկապ, կամ ինչպես՝ ս մխիթարեինք արցունքն աչքերին մեր անփոխարինելի ազերթուրքին նախանձող լեզվաբանին:

Ընթերցող, վերջին ոչ լրիվ մի հարյուրամյակում ազերթուրքը չորս անգամ փոխել է իր այբուբենը: Անցյալ դարի այս ժամանակներում գրում էր արաբերեն տառերով, մի երկու տարի հետո, հետևելով իր «մեծ եղբորը», անցավ լատիներենին, 1935 թ. գրկեց ռուսերենի այբուբենը, Միության լուծարումից հետո նորից անցավ լատիներենին: Իսկ մեր լեզվաբանը, ոչ ավել, ոչ պակաս, նախանձի արժանի ժողովուրդ է ճարել: Կամ ի՞նչ ասեինք Մատենադարանի ծեռագրագետին, որը արիամարիանքով հայտարարում է. «Իրեն գրագետ համարող մարդը մատյան չպետք է ասեր, մատենա պետք է ասեր: Ու մնացել է, որ դրա հետևողությամբ մատյանադարան ասեն»: Բայց չէ՞ որ չորրորդ դասարանի ամենածույլ երեխան անգամ գիտի այդ ամենը: Քանի՞ չորրորդ դասարանի ուղարկենք Մատենադարան, որ համոզեն պարոն Տեր-Վարդանյանին, որպեսզի վերջինս մեր Մատենադարանը Մատյանադարան չդարձնի:

Եզրափակելով մեր ասելիքը ջունգլիական էլիտայի լաբախաղացությունների մասին՝ տեսնենք, թե ինչի հասանք:

1. Լուսավորվեցինք և իմացանք, որ հայոց լեզվի շարադասությունը ռուսերենի շարադասությունն է, որից պետք է անհապաղ ազատվենք, որպեսզի մեր ժողովուրդը չճեղքվի և սկիզբ դնի երկու տարբեր ազգերի:

2. Մեր ժողովրդի ձևավորման հարցում Հայկ Նահապետի հետ մրցության ելած Պարույր Հայրիկյանը, ի տես բոլորի, կըռտեց սեփական անունը ու դարձրեց Պարոյր: Դա էլ համարենք մեր առաջին լուրջ նվաճումը:

Պարոններ, այսօր աշխարհը դղրդացնող մարդու իրավունքներն ու ազատությունները, ամենուր հասնող էուրո չափանիշները ձեզ լիակատար իրավունք ու հնարավորություններ են տալիս ձեր ցանկությունները իրականացնելու: Կռռեցե՛ք ինչ ունեք կամ կարող եք, միայն թե հանգիստ թողեք՝ հազար ու մի ցավի և մարտահրավերի դեմ մաքառող ժողովրդին, մի՛ պղտորեք պարզ ու զուլալ ջրերը, վե՛րջ տվեք ձեր համալահոսիսական նենգամտություններին, որն ամենուր բերում է խառնակություն ու քաոս:

Արտաշես ՀԱՎՈՐԵՋԱՆՅԱՆ

ԶՈՒՆՔԻԱԿԱՆ ԼԱՐԱՆԱՂԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԶԲՈՒՐԸ

տալիս, մեր նախնյաց շունչին հաղորդակից լինելու համար մենք չենք ուզում մեկ թերթ սովորել»:

Ընթերցող, ք. Արամյանի մեկ թերթի դիմաց Ս. Գյուլբուրդյանը «Առձեռն բառարանում» հաշվել է, որ միայն բառասկզբում յ-ով գրվող 1840 բառ կա, ինչպես՝ յիմար, յիշել, յոռի, յուսալ և այլն: Ել չենք խոսում տեղի-անտեղի բառերում վխտացող անտեղի օ-երի, է-երի ու-երի մասին: Բայց որպեսզի ք. Արամյանի խոսքը իր զորավոր ազդեցությունն ունենա, անմիջապես օգնության է հասնում Պարզև սրբազանը և միևնույն ցցած, Չենով Օհանի գրնգուն ծայնով հուսադրում է մեզ մեծ խեղճերին. «Թող ոչ ոք չվախենա, որոնք հա՛յ, ես գրագետ եմ, վաղը կլինեն անգրագետ... »:

Ավելորդ է ասել, որ մեր ջունգլիական էլիտայի գլխավոր թիրախներից են դառնում բոլոր նրանք, որոնք չեն պարուն իրենց զուռնայի նվագի տակ, չեն հաշտվում իրենց աննախադեպ նենգափոխումների, ամեն ինչ գլխիվայր ներկայացնելու ձգտման հետ: Այդ կարգի մարդիկ անպայման «դառնում են» ապագային գործակալներ, հայության հակառակորդներ, «որոշ դեպքերում էլ՝ հայ ժողովրդի թշնամիներ»: Բավարարվենք մի քանի մեղադրանքով՝ մեկնաբանությունները թողնելով ընթերցողին:

«Հայության հակառակորդները զանգվածաբար ստեր են տարածում միասնական ուղղագրության վերականգնման գործն ավարտին հասցնելու գաղափարի դեմ: Հիմնականում դրանք անում են կոմունիստական բռնապետության տարիներին գիտական աստիճան ստացած իրենց գործակալների միջոցով»:

«Լեզվի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում ասված է. «ՀՀ-ն նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը: Միասնական ուղղագրության վերականգնումը ավարտին հասցնելու գործնական քայլը զուտ խորհրդանշական էր: Սակայն ժամանակի ընթացքում կրկին դրության տեր դարձած ապագային տարրը ոչ առանց մասնագետ լեզվաբանների ճնշմամբ հրաժարվեց նույնիսկ խորհրդանշական քայլից՝ գլխավոր օրաթերթի անունը՝ «Հայաստանի Հանրապետություն», մնաց անփոփոխ»:

«Ազգային միասնության կարևորագույն ազդակ հանդիսացող ազգային դասական ուղղագրության ճանապարհի խոչընդոտը չակերտավոր «լեզվագետ»-ների գործունեությունն է, երկրորդ գլխավոր պատճառը հասարակության անտեղյակությունն է, ցավոք որոշ դեպքերում էլ հայ ժողովրդի թշնամիների դաշնակիցն է դառնում մարդկային բնությանը բնորոշ մեր ծուլությունը»:

Պարզ է, որ հայ ժողովրդի այդ «թշնամիները» իրենց զուռնայի նվագի տակ չպարողներն են, և իրենք էլ, հաղ-

նրանից, որ Աբովյանը հիմնականում գրել է գրաբար, Քանաքեռի բարբառով գրած իր «Վերք Հայաստանի» վեպն էլ գրեց նույն գրաբարյան ուղղագրությամբ»: Իրականում Աբովյանն առաջինն էր, որ բառեր խոթած արիեստական ու-երն ու է-երը մերժեց, վերականգնեց հայոց լեզվի արտասանական համակարգին հարազատ հնչվող վ-երը: Դա հաշվի մեջ չէ, դա «բարբառային շեղում» է դասական ուղղագրությունից: Այսպես է գնահատվում մեր մտավոր կյանքում նոր դարաշրջանի սկիզբն ազդարարած Աբովյանը: Եվ մեր էլիտայի զառանցանքները հասնում են արդեն տիեզերական չափերի, «սրտի ցավով պարզում են», որ չորս զուգահեռ տառերի (վ-ւ, հ-յ, ո-օ, ե-է) երեսից չորսացել է նույնիսկ մեր ժողովրդի արզանդը, և այլևս չենք կարողանում ծնել թումանյաններ, տերյաններ ու չարենցներ:

Մի այլ տարբերակով է հնչում զառանցանքը Սուտ երկրորդում. «Դասական-մետրոպոլիտան ուղղագրությունը արևմտահայերի ուղղագրությունն է»: Այստեղ էլ հիմքում դրված է Նշան Որբերյանի զրպարտանքն այն մասին, թե «հայերենից լեզվաբանության մեջ եղանակ ստեղծողները ... փաստորեն նենգափոխում են ուղղագրության հարցը՝ այն ներկայացնելով ժողովրդին որպես «արևմտահայերեն ուղղագրություն» մտցնելու պարտադրանք»: Ինչքան էլ հարուստ է մեր լեզվի բառապաշարը, համեստորեն խոստովանում ենք, որ չկարողացանք համարժեք բառեր հայտնաբերել այդ անհատակ նենգամտությունների արժանի գնահատականը տալու համար: Մինչև ո՞ր խորխորատները կարող են հասնել կոլեկտիվ զառանցանքները: Բայց անցնենք «ամենը» ու մակերեսային նենգություններին:

Եվ այսպես, Սուտ երրորդ. «դասական ուղղագրության վերադարձը կապված է մեծ ծախսերի հետ»: Գարշաճով գարշում ենք այդ «ծախսերի» մասին լսելուց անգամ և երանի ենք տալիս, որ մեզ չստիպեն գործ ունենալ այդ աղբանոցի հետ: Դրա համար էլ շեշտակի անցնում ենք Սուտ չորրորդին, ուր «փայլատակում է» մեր ջունգլիական էլիտայի հոգատարությունը ժողովրդի ծախսերը թեթևացնելու գործում: Պարզվում է, որ «թշնամիները» զրպարտել են նրանց, թե իբր բառավերջում չլսվող յ գրելու դեպքում (օրինակ՝ արքայ) տառերի թիվը ավելանում է, «լրացուցիչ էջեր են ավելանում, իսկ մեծ տպաքանակի դեպքում լրացուցիչ ծախսեր են առաջանում»: Նախ՝ «գիտականորեն» ապացուցում են, որ այդ չարտասանվող յ-ն արմատի բաղադրիչ է, քանի որ բառի աճման դեպքում վերականգնվում և արտասանվում է, ինչպես՝ արքայի, արքայական: Նրանք խորամանկորեն անգիտանում են, որ կից ծայնավորների միջև հանդես

Նոր սուբստրատ– «Արագած»

Սակավահող Հայաստանը հաճախ ստիպում է մեր գիտնականներին փնտրել և գտնել ավելի արդյունավետ միջոցներ, քան բնական հողն է:

Տարիներ առաջ գիտական ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ ԳԱԱ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում ծնվեց արհեստական հող-սուբստրատ՝ «Արագած» անվամբ, որը շատ բարձր որակի շնորհիվ սկսեցին կիրառել գյուղատնտեսության մեջ ու մանավանդ՝ դեկորատիվ այգեգործության:

Հայտնի է, որ տարիներ շարունակ տարբեր ծաղիկների սածիլներ են ներկրվել Բուլղարիայից, Լիտվայից, Էստոնիայից, և ապա երկար ջանքերից հետո դրանք դարձել են ծաղիկներ:

Սոչիի ինստիտուտներից մեկում համատեղ աշխատանքների շնորհիվ մինչ այդ օգտագործվող ավազի, փայտի թեփի

փոխարեն առաջին անգամ օգտագործվեց «Արագած» արհեստական հողը, որի արդյունքները շատ հուսադրող էին. սկսվեց նրա կիրառումը Դրիմի մի շարք ջերմոցներում, Դոնեցկում, Մոսկվայում և այլ քաղաքներում: Մենք հարյուրավոր տոննաներով «Արագած» էինք արտահանում: Այս գործընթացը ընդհատվեց, երբ փակվեց ինստիտուտի փորձնական գործարանի համապատասխան արտադրամասը:

Չեմ կարծում, որ Հայաստանը հողային տարածքներով, մանավանդ որակյալ, ավելի հարուստ չէ, քան Բուլղարիան, բայց 1971 թվին, ինձ հասած տվյալներով, այսօր արտադրվում է «Балкани» արհեստական հողը և արտահանվում Գերմանիա, Իտալիա, Հոլանդիա և այլն:

«Արագածը» իր ստացման տեխնոլոգիայով շատ ձեռնտու է, որովհետև անցնում է բարձր ջերմաստիճանային պրո-

ցես, ինչն էլ նպաստում է նրան, որ այն դառնում է ստերիլ: Իսկ այդ միջավայրում մոլախոտեր չեն աճում:

«Արագած» սուբստրատի մեծ օդափոխանակման շնորհիվ սածիլները ձեռք են բերում փնջային արմատակալում, բարձր հասակ, մոտ երկու անգամ կրճատվում է արմատակալման ժամանակը, ստացվում է առատ բերք, սածիլների արմատակալումը հասնում է 99 %-ի:

«Արագածի» ջրակլանումը հասնում է հարյուրավոր տոկոսների, որն էլ նրա համար դառնում է ջրի շտեմարան:

«Արագածը» օգտագործելուց հետո կարելի է խառնել հողի հետ՝ բարձրացնելով օդափոխանակությունը, փխրունությունը:

Առաջարկվող «Արագած» արհեստական հողի միջավայրում լավ են աճում ելակը, արքայամորին, լոլիկը, վարունգը, սոխը, սխտորը, եգիպտացորենը, հացա-



հատիկը, սունկը:

«Արագածի» կիրառմամբ աղակալված հողերի վրա կարելի է ստեղծել ջերմոցներ և տարածել նրա կիրառման ոլորտները հողով աղքատ երկրներում:

Հարթ կտուրները դարձնելով ջրաանթափանց կարելի է դրանք դարձնել ծաղիկներ, բանջարեղեն աճեցնելու տարածք:

Ինչո՞ւ մենք տեր չենք կանգնում մեր գիտությանը:

Ռիմա ՄԱՆՈՒԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների
թեկնածու

Համապարփակ Անգլերեն- ռուսերեն-հայերեն կենսաբանական բառարան

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արմեն Սիմոնյանի և դոցենտ Իդա Բատիկյանի Անգլերեն-ռուսերեն-հայերեն կենսաբանական բառարանը, որի անհրաժեշտությունը վաղուց հասունացել էր:

Վերջին տասնամյակները նշանավորվեցին կենսաբանության տարբեր բնագավառներում ձեռք բերված ակնառու գիտական հաջողություններով: Աննախադեպ գիտական առաջընթաց է կատարվել կենսաքիմիայի, մոլեկուլային կենսաբանության, կենսաֆիզիկայի և կենսաբանության այլ բնագավառներում: Ժամանակակից կենսաբանական գրականությունը հարստացել է բազմաթիվ նոր տերմիններով, նախկինում օգտագործված շատ տերմիններ ստացել են նոր նշանակություն կամ որոշ դեպքերում հնացել են: Միջազգային կապերի ընդլայնման շնորհիվ կենսաբանության բնագավառում զգալիորեն աճել է գիտական ինֆորմացիայի փոխանակումը, խիստ կարևորվել է հայոց լեզվով տերմինների ճիշտ թարգմանությունը: Սակայն հայ լեզվով կենսաբանական բառարանի բացակայությունը դժվարացնում է այդ գործը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացված անգլերեն-ռուսերեն-հայերեն կենսաբանական բառարանը հնարավորություն է տալիս լրացնելու այդ բացը: Բառարանը պարունակում է կենսաբանության տարբեր բնագավառներին կենսաքիմիային, կենսաֆիզիկային, գենետիկային, մոլեկուլային կենսաբանությանը, կենդանաբանությանը, բուսաբանությանը, անատոմիային, ֆիզիոլոգիային, էկոլոգիային, մանրէաբանությանը, կարգաբանությանը, կենսաաշխարհագրությանը, ինչպես նաև կենդանիների, բույսերի, սնկերի, մանրէների և այլ օրգանիզմների անվանումներին ու դրանց լատիներեն համարժեքներին վերաբերող ավելի քան 80 000 տերմին: Բառարանի հեղինակները, կենսաբանության բնագավառում լինելով վաստակաշատ գիտնականներ, բազմամյա հսկայական աշխատանք են կատարել նյութի հավաքման, մշակման և երեք լեզուներով գործնականորեն անթերի ներկայացման համար: Այդ հսկայական աշխատանքը, անշուշտ, արժանի է ուշադրության և բարձր գնահատականի: Անգլերեն, ռուսաց և հայոց լեզուներով նման բառարան Հայաստանում լույս է տեսնում առաջին անգամ և նախադեպ չունի: Իրապես, հեղինակները կարողացել են մի բառարանում ընդգրկել տարբեր աղբյուրներից ու բառարաններից վերցված կենսաբանական տերմինաբանությունը և ներկայացնել անգլերեն, ռուս և հայոց լեզուներով: Միաժամանակ բառարանում տեղ են գտել նոր տերմիններ, բազմաթիվ բույսերի, կենդանիների տեսակների և դրանց ենթատեսակների անվանումներ, որոնք կազմվել են անգլերեն, ռուսերեն և լատիներեն համարժեքներին համապատասխան: Դրանք հաջողված անվանումներ են և կարող են կիրառվել կենսաբանության համապատասխան բնագավառներում:

Բառարանը կազմված է բարեխղճորեն և մատչելի ձևով: Ընթերցողին է ներկայացվել երեք լեզուներով կենսաբանական մասնագիտական բառարան, որն իր բառարանային բովանդակությամբ, կենսաբանական տերմինների և անվանումների քանակով համապարփակ է և իր տեսակի մեջ առաջին փորձն է հայ բառարանագրության մեջ:

Բառարանը նախատեսված է կենսաբանության, բժշկության, գյուղատնտեսության տարբեր բնագավառներում աշխատող մասնագետների լայն շրջանի, ինչպես նաև թարգմանիչների, ուսուցիչների, ուսանողների, բարձր դասարանների սովորողների համար և, անշուշտ, կնպաստի միասնական կենսաբանական տերմինաբանության կիրառությանը, ինչպես նաև անգլիալեզու և ռուսալեզու տերմինների հայոց լեզվով ճիշտ թարգմանելու գործի: Դրանով նպաստելով կենսաբանության զարգացմանը:

Ուզում եմ մշել նաև, որ այս եռալեզվյան համապարփակ կենսաբանական բառարանից կարող են օգտվել ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի և այլ երկրների համապատասխան մասնագետները:

Վլադիմիր ՄԿՈՒԱՉՅՈՎ

ՌԳԱ ակադեմիկոս, Ա.Ն.Բելոզերսկու անվան


ֆիզիկո-քիմիական գիտահետազոտական

ինստիտուտի տնօրեն, Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի

անվան պետական համալսարանի

կենսաճարտարագիտության և

կենսաինֆորմատիկայի ֆակուլտետի ղեկավար



Քննեցեք ձեր սիրտը և նայեցեք, թե կա՞րդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա մեր այդ հոգևոր Հայաստանը. եթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը նյութական Հայաստանի համար
Վ.Տերյան, «Հոգևոր Հայաստան»


Քսանմայա ցնցումնային կերպարանափոխումներից հետո երկրի սոցիալական կառուցվածքը այսօր ներկայանում է «հաղթողների», «պարտվողների» և «իրենցից ոչինչ չներկայացնողների» շերտախմբերով:

«Հաղթողը», նույն ինքը՝ հեշտ հարստացողը, շրջապատված է հասարակական ուշադրությամբ ու պատվով: «Պարտվողը», ընդհակառակը, խորհրդանշում է կենսական անհաջողությունը, նրա մեջ բացակայում են այն որակները, որոնք կարող են հարգանքի կամ ինքնահարգանքի հիմք ծառայել: «Պարտվածը» կամ «անհաջողակը»՝ սոցիալական արհամարհանքի խորհրդանշան է, երբեմն միախառնված հարուստ դուրսաբոլակների բարոյապես ոչնչացնող «խղճահարությամբ» կամ ցուցադրական «զբախրությամբ»: Զանգվածային գիտակցության մեջ վերոնշյալ երկյակը փոխակերպվել է եռյակի: «Հաղ-

կան կյանքում վաղուց իրագործվել է Թ.Հոբսի գաղափարը՝ «Բոլորի պատերազմը բոլորի դեմ»: Հենց այդ երևույթն է ծնել սոցիալական ու քաղաքական մարդակերության ախտանիշները, երբ սեփական տեսակետի և դիրքավորման ապացուցումը հիմնվում է ոչ միայն հակառակ, այլև ցանկացած մեկ այլ տեսակետի հախուռն ժխտման վրա:

Մեկ այլ պարադոքս. բազմակուսակցականությունը մեզանում կա, իսկ կուսակցություններ՝ չի: Կուսակցությունները շատ են, իսկ դրանց շուրջ աղմուկը, անհագուրդ հավակնությունները և սին պատվամոլությունը՝ էլ ավելի շատ: Թերևհ հնարավոր չէ թվարկել բոլոր փոխադարձ մեղադրանքներն ու հերյուրանքները, իսկ արդյունքը՝ հայ հասարակությունն անընդունակ է դարձել և չի էլ ցանկանում հասկանալ «քաղաքական» այն անձանց,

Պարադոքսների խճանկար կամ մինչև ո՞ր կարող է հասնել բարոյալքումը



թողի» և «անհաջողակի» կողքին ի հայտ է եկել «շարքային Աշոտը», որը «ոչ այս է, ոչ այն», մարդ է, որը «չունի նշանակություն», ֆրանսիացի պոետ Բորիս Վիանի խոսքերով ասած՝ «Ուրույն նշան» այդ աննշանը: Նա ոչ դրական, ոչ էլ բացասական կերպար է, ինչն ըստ էության նշանակում է նրա նկատմամբ որևէ սոցիալական հարգանքի բացակայություն:

Թվում է՝ մեր ամենօրյա կյանքից անհետացել են ազգային նույնականության այնպիսի չափորոշիչներ, ինչպիսին են՝ «անհաջողակները»՝ նույնպիսի հայ մարդիկ են», «մեր հայրենակիցներն են», «մեր թշնամիները չեն», «պարզապես մարդիկ են, համաքաղաքացիներ», «հայրենիքում մարդկանց չեն կիսում յուրայինների և օտարների»:

Լոգոված արժեքափանիշներով մեր մեջ «օտարներ» հայտնաբերելը ազգավտանգ նախանշան է: Դա խոսում է այն մասին, որ հայ հասարակությունն ու ազգն արդեն ընկալվում են որպես մարդկանց քառակերպ խառնակույտ, որոնք բաժանվում են «լավերի ու վատերի», «իշխանիկների ու վասալների», ինչը վկայում է ազգի սոցիալական ջլատվածության, բարոյական վիատվածության մակարդակի, ազգային կյանքը սև-սպիտակ հակադրությամբ ներկայացնելու գոեհիկ պատկերացումների մասին: Տպավորությունն այն է, որ ապրում ենք բարոյական խառնակության և շփոթի ժամանակներում: Ինչպես ժողովրդական իմաստությունն ու երգիծանքն են բարբառում գավառացու շուրթերով, այնպիսի վիճակ է, որ «ոչ՝ բռնա ու կայնի, ոչ թող ու փախի»:

Որոշ վերլուծաբանների պատկերավոր արտահայտությամբ մեզանում ձևավորվել է ոչ թե շուկա, այլ իսկական բազար: Առաջացել են միմյանց զուգահեռ գործող տնտեսություններ: Կյանքի են կոչվել տնտեսավարման վայրենաբարո, բարոյագուրկ և հանցավոր ձևեր: Յուրօրինակ համազգային խաղ է դարձել հայրենակիցներին անագնիվ հնարքներով շրջանցելու-«զցելու», անվանարկելու և ստորացնելու, խարդավանելու «արվեստը»: Սոցիալական դժգոհությունները կենտրոնացնում են այն անծանց վրա, որոնք իրականում մարմնավորում են այդ իհն «բազարային» հարաբերությունները/բիզնեսմեններ, բանկիրներ, ձեռնարկատերեր և նրանց հետ կապված տնտեսական նորագույն թատրոնի այլ «դերակատարներ»: Ազգային բարոյականությունը դարձել է փնտրվող-չգտնվող երևույթ նաև մեր քաղաքական կյանքում: Բարձր սկզբունքների հռչակումը զուգակցվում է երեսպաշտական մարտավարության հետ, քողարկվում են իսկական նպատակները և եսապաշտական մտադրությունները: Բարոյական վարքի պարադոքսը առաջինը ձևակերպել է Օվիդիոսը. «Լավը, բարին տեսնում, գովաբանում են, սակայն ձգտում են վատին»: Դրա ցայտուն օրինակն է կաշառակեր չինովնիկը, որ հանդես է գալիս կաշառակերության դեմ պայքարը ուժեղացնելու «խանդավից» քարոզով, կամ երեսպաշտ քաղաքական գործիչը, ով հավատում է իր խոստումներին միայն ընտրաշավների ժամանակ: Թվում է, թե մեր ներքաղաքա-

ովքեր տենչում են ամեն գնով ճեղքել-հասնել իշխանության:

Պարադոքսներով և անհեթեթությամբ է հագեցած հավաքական իրավական գիտակցությունը: Խոսքերով բոլորը ոնց որ թե Սահմանադրության, օրենքի դիկտատուրայի կողմն են: Ով չի ծուլանում, խոսում է օրինականության և բարոյականության մասին, բայց այն ոտնահարվում է ամեն քայլափոխի: Տարածում է ստացել հայի այն տեսակը, ով մի կողմից պայքարում է օրինականության, իրավակարգի հաստատման համար, իսկ մյուս կողմից հնարավոր է համարում դրանք խախտել, եթե դա օգտակար է անձամբ իր համար և չի ոտնահարում իր կամ իր խմբի շահերը:

Օրենքի գերիշխանության անհրաժեշտության գաղափարը զանգվածային գիտակցության մեջ տարիմաստորեն զուգակցվում է իրավական, բարոյական միմիկիզմի հետ: Շարքային ընտրողը համոզված է, որ «իր կարծիքը որևէ բարոյաիրավական նշանակություն չունի հայրենի իշխանությունների համար»: Նա իրեն զգում է ինչպես այն հայը, ով բաժնետերերի ժողով ներկայացել է իր միակ արժեքը, մինչդեռ ամեն ինչ որոշում են խոշոր բաժնետերերը: Առհասարակ, հասարակությունը, ժողովուրդը, որ հիմնականում հենց այդ շարքային ընտրողն է, որ ամփոփվում է իր մեջ, որ չի ստանում համարժեք լրատվություն կամ չի տեսնում կարծիքների բախում և ամենախելամիտ տեսակետի հաղթանակ, խիստ դժվար է կարգավորել, բարդ է կանխատեսել նրա տրամադրությունները: Սոցիալական լուսանցքում ականա հայտնված հայ հասարակության քաղաքացիները սովորում են թաքցնել իրենց բուն զգացումներն ու հույզերը: Նրանք չեն արտահայտում ո՛չ ուրախություն, ո՛չ տագնապ, ո՛չ սպասում, ո՛չ վատատեսություն: Բոլորի մոտ անտարբերորեն վերացած աչքեր, որոնց նայելիս երբեք չես որոշի, թե ինչ կարելի է սպասել այդ հասարակությունից, ժողովրդից: Հենց դրանում է թաքնված իշխանությունների համար առավել մեծ վտանգը: Դա իրավիճակ է, երբ չգիտես, թե երբ կայթթի, երբ չգիտես, թե ում վրա կարելի է հենվել, իսկ ում հետ՝ հույսեր չկապել:

Մեկ այլ պարադոքս: Նախկինի պես սիրում ենք մեր մասին խոսել որպես թատերասեր, զրքասեր ազգի: Սակայն այսօր թատրոնները, զանազան շնորհանդեսները և «կորպորատիվ» երեկույթները, զրքերը և այլն հիշեցնում են բեմականացված շոու-հանդիսություններ: Թվում է՝ ապրում ենք «բեմականացված հասարակության» մեջ, որտեղ փող «սարքելու» և կարիերա անելու միջև ընկած միջնադարի ընթացքում հոգևոր վակուումը «ծեռաց» լրացնելու զավթախաղային փորձեր են ձեռնարկվում: Մերօրյա «զգայական բջջախոհական արվեստի» նպատակը դառնում է ամենօրյա հոգևոր պահանջմունքների գոեհիկ ոճավորումը: Դա նշանակում է ձևաբեկել զեղարվեստական իրականությունը, ապաիրականացնել արվեստը և մայրենի լեզուն: Պատահական չէ, որ մեր ինքնության գրավականը՝ մայրենի լեզուն և նրա բառապաշարը, հետզհետե աղքատիկ են դառնում, աղքատվելով քրեական մշակույթի արտանետումներով: Քերականության պարզունակամացմանը զուգահեռ՝ գոեհիկանում է շարահյուսությունը: Այդ գործընթացների վրա մեծապես ազդում է հեռուստատեսությունը: Մեր հաշվարկներով հեռուստալայններով միջին հաշվով օրական ցուցադրվում է բռնության և սեքսի առնվազն 20-25 դրվագ: Մեծն Շեքսպիրի 24 պիեսներում պատկերված է սպանության ընդամենը 54 դրվագ-գործողություն: Այսինքն՝ ճիշտ այնքան, որքան երկու հեռուստատերերային ընթացքում:

Հեռուստախոհանոցի մասին վկայում են գովազ- ➤6

➤6 դի ցուցանիշները: Սպանություններ, ծեծկռուտքի ու սեքսուալ անպարկեշտ տեսարանները յուրաքանչյուր 15-20 րոպեն մեկ ընդհատվում են, և հեռուստադիտողը հերթական անգամ «ռմբակոծվում» է զովագոյալին հայտարարագրերով: Մեզանից յուրաքանչյուրը օրական ենթարկվում է 150-200 զովագոյալին «հրետակոծության»: Հաշվարկված է յուրաքանչյուր ակնթարթի, կադրի ֆինանսական հատույցը: Հայկական հեռուստատեսությունը «կրակում», «սպանում», «բռնաբարում» է: Թվում է, թե ճշացող

րովհետև «մարդը մարդուն գայլ է», «կյանքը ջունգլի է, ուստի կամ դու ես ուտում, կամ բեզ ես ուտում» և որ՝ «չլինես բարձրամիտ պարզամիտի մեկը, այլ միշտ եղիր հարկավոր տեղում, հարկավոր պահին և որսա քո հաջողությունը»: Բարոյազանցության տիպիկ օրինակներ են տալիս այսօր մահ մեր փողոցային երթևեկության խախտումները: Երջանկահիշատակ հայրիկիս խոսքերով՝ «հարուստը Արևմուտքում երթևեկում է «ռուս-ռոյտով», իսկ շարքային քաղաքացին հին «Շկոդայով», սակայն երթևե-

լացվում են պատմության առանձին պահերը: Շատ բան տեղի է ունենում ըստ հայտնի բանաձևի՝ «ես այրեցի այն, ինչը երկրպագում էի, երկրպագում եմ այն, ինչն այրում էի»: Հայ հասարակության մեջ շատերն այսօր չեն դադարում խոսել մայրենի լեզվի, մշակույթի, նախնիների մասին հիշողությունը պահպանելու անհրաժեշտության մասին: Սակայն այդ ամենը թվում է թե առավելագույն դերասանական կոչ է, ընդ որում՝ ասված հանուն սեփական վարկանիշի «պայծառաց-

Գիրքն իրև ուղեկից

Լույս է տեսել ավագագույն իրավագետ-քաղաքագետ Սարգիս Խաչատրյանի «Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն» ոչ ծավալուն գիրքը:

Այն նվիրված է մեր Սահմանադրությամբ հռչակված՝ նոր հասարակության և նոր պետության կառուցման տեսությանն ու պրակտիկային: Հռչակելը՝ հռչակել ենք, բայց մենք դեռ շատ հեռու ենք և՛ քաղաքացիական հասարակությունից, և՛ իրավական, առավել ևս՝ սոցիալ-իրավական պետությունից: Մեր հռչակածը լավագույն դեպքում ուրվագիծ է, ծրագիր, որի իրականացման համար պահանջվում է տևական ժամանակ, վիթխարի ջանքեր, պետականաշինական հմտություն և իրավաքաղաքագիտական իմաստություն: Եվ ոչ հետին թվով ազգային առանձնահատկությունների և սեփական կարողականության հաշվառում:

Ուրեմն ուղին հիմնականում ընտրված է, մնում է գործել, աշխատել ու արարել: Ինչ խոսք, դա առանձին քաղաքական ուժերի, առավել ևս անհատների ու նվիրյալների գործը չէ միայն: Դա մեր ողջ հասարակության, նրա բոլոր կառույցների, բոլոր քաղաքական կազմակերպությունների, յուրաքանչյուր հայրորդու և քաղաքացու, առավել ևս մեր պետության կառավարող ընտրամու գործն է, նրա սրբազան պարտականությունը:

Նոր հասարակությունը և պետությունը փակ աչքերով չէ, որ պետք է կառուցենք: Մարդկությունը, նրա իրավափիլիսոփայական և պատմաքաղաքական միտքը այդ հարցերով մտահոգվել են դեռևս հազարամյակներ առաջ, այդ մտքերը զարգացել են ու խորացվել միջնադարում, նոր և նորագույն ժամանակներում, ճանաչվել են բուրժուական հեղափոխությունների ժամանակ ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում և իրագործվել: Մեր ժողովրդի նախընթաց իմաստասիրական միտքը ևս հիշարժան անդրադարձներ է ունեցել դրան:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իրավական պետության գաղափարը ճանաչվել է Գերմանիայի դաշնությունում և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում: Այժմ այդ ուղիով են ընթանում հետսոցիալիստական և հետխորհրդային տարածքի անցումային շրջանում գտնվող մի շարք պետություններ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Այս հարցերի լուսաբանմանն ու վերլուծությանն է նվիրված Մ. Խաչատրյանի գիրքը, որը կարող է օգտավետ լինել ոչ միայն իրավունքի տեսություն և իրավունքի փիլիսոփայություն ուսումնասիրող բուհական երիտասարդներին, այլև շատ մտավորականներին, պետական, հասարակական և քաղաքական գործիչներին:

Արմեն ՀՈՎՍԵԲՅԱՆ

Պարադոքսների խճանկար...

հայրենական զովագոյը կոչ է անում՝ կուլ տուր ամեն մի հիմարություն, անպարկեշտություն, գլուխդ լցրու անմտությամբ ու անհեթեթությամբ, որպեսզի էլ տեղ չմնա ճշմարտության, հայրենասիրության, բարության և առաքինության համար:

Փոխվել է հեռուստալեզուն՝ վերարտադրելով ամենօրյա կյանքի սյուժեներն ու «նոր հայերի» բարքերը: Փողոցային և քրեական լեզվանյութով հեռուստալեզվի «հարստացումը» հանգեցրել է բարոյա-հոգևոր կյանքի «անասնացմանը»: Արդեն բոլորն են խոսում «նոր հեռուստամշակույթի» սպառնալիքների մասին:

Ասում են՝ երեխաների անապատա-նությունը հիմնականում կապված է փողոցի, անհայրության սինդրոմի հետ: Սակայն հեռուստատեսությունն այսօր ծնել է մի նոր տեսակ, որն է՝ ինտերնետային, հեռուստատեսային անապատա-նությունը: Ինչպես ասում է ժամանակակից մի բանաստեղծ՝ հեռուստացույցի առջև նստած երեխաները սնվում են հեռուստացույցի սառը կաթով, իսկ մեծերը դիտում են, թե հեռուստատեսային կանաչ դաշտում ինչպես է առածում կոկոնը. օանգի իրական բնության մեջ չեն կարող հանգստանալ... Նրանց մնում է վիրտուալ, երևոյթային աշխարհը... Մարդիկ դարձել են յուրօրինակ «տեղեկոմներ»... Այս ամենը ծնում է ծնողական մեղքի ու միայնության անտանելի զգացողություն: Հայ ծնողը հաճախ իրեն լիարժեք չի զգում, նույնիսկ՝ ընտանիքում: Ավելին, իրեն միայնակ ու օտարված է զգում սեփական պատերի մեջ: Հայ ծնողներից շատերը տառապում են թե՛ նյութական զրկանքներից և թե՛ սիրո, համերաշխության ու փոխըմբռնման ահավոր պակասից: Դա թուլացնում է նրանց բարոյական ներուժը, ամենօրյա կյանքը դարձնում անհմատ: «Սարսափելին, - ասում է հոգեվերլուծաբան Վիկտոր Ֆրանկլը, - տառապանքները չեն: Սարսափելին անհմատ տառապանքներն են»:

Վաղըջական ժամանակներից զավակապաշտությունը հայի համար եղել է ու կա նրա գոյապահպանման ամենագործը կռվանը: Իսկ այսօր... Թվում է՝ ամենուրեքյան է դառնում ծնողությանը, բարքերի անզուսպ գռեհկացումը: Բարոյական այդ անասնացումը սպառնում է հիմնավոր ազգի գոյությանը: Չպետք է մոռանալ, որ հայ մշակույթը ոչ այլ ինչ է, քան գոյապահպանման ուրույն ընտանեկան մշակույթ՝ իր ավանդույթներով, սովորույթներով ու հավատալիքներով: Այսօր հույժ կարևոր է, որ ոչ միայն առանձին հայ անհատը, այլև ընտանիքը, ազգն ու պետությունը դուրս գան ստեղծված ճակատագրական փակուղուց...

Սոցիալական բարոյականության նորմերը դարձել են ծայր անկայուն, անվստահելի, երերուն: Նույնիսկ երկմտում ենք, որ երբ դաստիարակում ենք մեր երեխաներին, ի՞նչ պետք է նրանց ներշնչենք, որ ուրիշներին չըջանցել-«զցնել», արհամարհելն ու խաբելը վա՛տ է, որ ուրիշների շահերի ոտնահարման կամ դժբախտության վրա երբեք չես կառուցի սեփական երջանկությունը, թե՛ կարելի է ուրիշներին արհամարհել ու խաբել, ո-



կության կանոնները բոլորի համար նույնն են»: Իսկ երևանում...

Վարկեր խճառ հայրիկների «չար բալիկների» և տանիքավոր «գյուրմամիշներ» անսքող քամահրանքը հայ հասարակության նկատմամբ, նրանց ավտոմոբիլային հանդուգն արշավանքները տխուր մտքեր ու մտազուգորդումներ են արթնացնում: Ակամա վերհիշում ես Պ.Դուրյանի վշտամորմոք տողերը.

**Հարուստին կառքն ահա կանցնի
սըրարշավ...
Ի՞նչու դազաղ լուռ գերեզմանն
իր իջավ...**

Մի՞թե այս սոցիալական մահապատկերը իրականություն է դառնում, մի՞թե մարդն այդքան կարող է օտարանալ մարդուց, հայր՝ հայից... Դա սովորական բարոյական պարադոքս չէ, այլ հայ ազգի, նրա պետական գոյության հիմնարկներից մեկի նկատմամբ ներքին վստահության վերականգման պրոբլեմ: Ազգի, նրա պետական գոյության գործըման գործում «... կա և ներքին կամքի խնդիր: Ազգը միայն արտաքին ուժերի գործությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլ իր անդամների ներքին մտավոր-հոգեկան կապով» (Վ.Տերյան, «Հոգևոր Հայաստան»):

Սակայն ի՞նչ արժեքներ պետք է այսօր առաջարկվի հայ հասարակությանը, ո՞վ կարող է լինել դրանց աղբյուրը և կոռոլը՝ «Այն, ինչ ճանաչվում է արժեքավոր՝ իշխող դասի համար, - նշում է մեծն Արիստոտելը, - այդպիսին անխուսափելիորեն դառնում է նաև մնացած քաղաքացիների պատկերացումներում»: Ուստի հենց մեր կառավարող դասի վրա է դրված ազգաբարոյ նորմերի ու արժեքների ձևակերպման, տարածման ու պահպանման պատասխանատվությունը: Կառավարող դասը կամ ընտրամի՞ն առաջին հերթին ինքը պետք է օժտված լինի «համոզմունքների ազգային եթիկայով»: Իշխանության ներկայացուցիչներից և ոչ մեկը, ով վերջին տարիներին հանդես է եկել բարոյական թեմաներով, այդպես էլ չի ճշգրտել, թե կոնկրետ ինչ է հասկանում դրա տակ, կամ ինչպիսին կցանկանար տեսնել հայ հասարակությունը, ասենք՝ 10 տարի անց, թե ինչն է համարում բարոյական և ինչը՝ անբարոյական:

Խորապես պարադոքսալ է «նորահայոց» պատմական հիշողությունը: Սկսվում են խորհրդային շրջանի պատմական անձինք և իդեալականացվում են Հայաստանի առաջին հանրապետության պետական այրերը: Հիպերբո-

ման: Նման կոչերը, նման ազգասիրական շուռներն ու ցույցերը, իրենց արհեստական պաթոսով տազմապ են հարուցում, ճիշտ այնպիսի տազմապ, որ ժամանակին զգացել ու արտահայտել է հայության հույզերի ու սպասումների ամենազգայուն թարգմաններից մեկը՝ Վ.Տերյանը.

**Չեմ հավատում ծիչերին ձեր ցնծագին
եվ խանդավառ աղմուկներին այդ
շփոթ...**

**Գաղտնի մի թույն կեղեքում է իմ հոգին
եվ ձեր խինդը սարսեցնում է որպես
թոթ:**

Ներկա հանգրվանում իսկական ծաղր են մտավորականությանը հաճախում տարբեր կուսակցությունների փորձերը: Նախընտրական բլեֆներով հնարավոր չէ համախմբել հայ մտավորականության կոտորակված ուժերը:

Այսօր չի կարող խոսք լինել հայ մտավորականության՝ իբրև ինչ-որ սոցիալական-քաղաքական և բարոյական ամբողջականության մասին: Ավելի շուտ դա խայտաբղետ, տրոհված, «հյուլ-լեացած» հոգևոր միջավայր է՝ կախույթային վիճակում գտնվող առանձին մասերով, որոնցից ամեն մեկը զբաղված է գոյատևման մակերևութի վրա մի կերպ մնալու-պահպանվելու կամ սոցիալական անհայտության հատակը չսուզվելու անհույս մաքառումով: Ըստ էության, հայ մտավորականության մեջ ներկայացված են մի շարք խմբեր, որոնց կառուցվածքը իբրև գիշատիչներ, մուտանտներ, քամելեոններ, քաղաքական մանկամիտներ, տմանկ շրջմուխներ, ծառայամիտներ, ամբոխավարներ, նոր այլախոհներ և այլն: Ետքը է ասել, որ այս բնութագրումները խիստ արտահայտիչ են: Եվ խիստ անհրապույր, անախանքելի...

Ազգի մտավոր, գիտական ներուժի փոշիացման, այդ յուրօրինակ ինտելեկտուալ և բարոյական ամլացման վտանգը վաղուց դարձել է իրականություն: Վախը հայրենի գիտության, առաջին հերթին ակադեմիական գիտության վաղվա օրվա հանդեպ փիլիսոփայական խորհրդածություններից վերածվել է համակ մտահոգության՝ երանգավորված հոռետեսական տոնայնությամբ: Ինչպես սոցիոլոգներն են հավաստագրում «թևակոխել ենք «մարդկային» ժամանակները»: Անցումը վայրենաբարո շուկայական տնտեսությանը մեզ բերեց ոչ թե սոցիալական, ազգային երանություն, այլ ծանր ապրումներ: Իսկ երբ լսում են Հայաստանում գիտելիքահեծ տնտեսություն ձևավորելու կառավարական հավաստիացումների մասին, ապա չեն կարող մեղամաղձոտ ինքնահեգնանքով չհիշել ոչ անհայտ Պանկլովսկու խոսքերը. «Պանկլովսկին պարտավոր չէ հավատալու այն ամենին, ինչ նրան ասում են»:

Մանուկ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ գիտակերթական
միջազգային կենտրոնի
փիլիսոփայության ամբիոնի վարիչ,
փիլիսոփայության գիտությունների
թեկնածու

«Սպիտակ-88» երկրաշարժից անմիջապես հետո սկսվեց շահարկվել այն կարծիքը, որ երկրաշարժը ոչ թե բնական աղետ էր, այլ արհեստական, և արդյունք էր պայթեցման:

Այս ստահող լուրերը այն ժամանակ խիստ անհրաժեշտ էին լեռնական հիշ-ականներին, որոնք ամեն ստորությամբ ընդունակ էին իշխանությունը զավթելու համար:

Սակայն ամենավտանգավորն այն էր, որ դրանով նրանք հայ ժողովրդին տրամադրում էին ռուս ժողովրդի դեմ:

Ըստ նրանց «վարկածի» ԽՍՀՄ պաշտպանության նախարար Յազովը ժամանել է Հայաստան և պայթեցնել տվել Սպիտակի մոտ գտնվող ռուսական ռազմական բազաները, որն էլ պատճառ է դարձել Սպիտակի դեկտեմբերի 7-ի $M=7.0$ մագնիտուդով երկրաշարժի առաջացմանը: Ոչ միայն անհետք է, այլև ծիծաղելի: Միանգամից ասենք, որ նման գործընթացը զուրկ է թե՛ տեսական և թե՛ գործնական հիմքերից: Պարզաբանենք:

Նման ստահող ու հեքիաթային լուրերի համար կարծեք թե հիմքեր կան, որոնք սկսվել էին դեռևս խորշոփյալ ժամանակներից, «երկրաֆիզիկական զենքի» մասին բացահայտ հայտարարություններ արել է նաև Բրեժնևը: Այս խոսակցությունները շարունակվել են անգամ Գորբաչովյան վերակառուցման տարիներին, թե իբր մայրցամաքի (նկատի ունեն ԽՍՀՄ-ը) և Սախալին կղզու միջև փորվել է թունելախորշ, որը թաքարական նեղուցի ամենամեղ հատվածով հասել է Կուրիյան կղզիները: Այն հետագայում պետք է շարունակվեր մինչև Ամերիկա:

Պատկերավոր ասած՝ նեղ և երկար խողովակ, որը փորացնում է տատանման հաժախությունը և կոչվում է «լիթոսֆերային ռեզոնատոր»: Հետագայում միջուկային զենքի պայթեցման օգնությամբ առաջացած սեյսմիկ ալիքը կառաջացնի այնպիսի ռեզոնանս, որը ԱՄՆ-ի 1/3-ը կթողնի ջրի տակ: Այսինքն՝ կառաջանան երկրաշարժեր, հրաբուխներ, ցունամիներ, փոթորիկներ և այլն: Եվ այս ֆանտաստիկ անհեթեթությունների հետևանքով, պիտի կարծել, որ տեղի է ունեցել Սպիտակի, Հայիթիի երկրաշարժերը, դեկտեմբերի 26-ի Հնդկական օվկիանոսի ցունամին, ճապոնիայում տեղի ունեցած Ֆուկուսիմայի երկրաշարժը և ցունամին: Հիմա հերթը կհասնի Իրանին և էլի ուրիշների և այսպես շարունակ: Երկրաշարժ կսարքեն որտեղ ուզեն, և բնական աղետները կվերագրվեն մարդկային մտքի թռիչքներին:

Այսպես, օրինակ, մեր հայրենակից Մելիք-Յուլյանը կանխագուշակում է մոլորակի վրա տեղի ունեցող երկրաշարժերը, ջրհեղեղները, փոթորիկները, տիեզերանավերի, օդանավերի, զնացքների խորտակումը և այլն...

ՄՊԱԾ-ի նախկին ղեկավար պրոֆ. Ս. Բալասանյանը կանխատեսում էր Իրաքի պատերազմի ժամանակ պայթեցվող ռումբերի հետևանքով առաջացած երկրաշարժերի բանակը: Աստված մի արասցե, եթե այս մտազարությանները ինչ-որ չափով համապատասխանեին իրականությանը, ապա պատկերացրեք, թե որքան երկրաշարժեր կարող էին առաջանալ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, ռմբակոծությունները Իրաքում, Լիբիայում, Բելգրադում և այլն:

Վերջին ժամանակներս շահարկվում է նաև սպասվող ուժեղ երկրաշարժերը կանխարգելելու կամ դրանք ավելի թույլ երկրաշարժերով փոխարինելու գաղափարը: Կրկնվում ենք, բայց պիտի ասենք՝ անհեթեթ է և ծիծաղելի:

Հայտնի է, որ միջավայրի սեյսմիկ ռեժիմի փոփոխություն դիտարկվում է, երբ կատարվում է պայթեցում (միջուկային թե սովորական), ջրամբարները կամ հորատանցքերը ջրով կամ հեղուկով լցնելիս, տատանողական շարժումներ իրականացնելիս, էլեկտրամագնիսական կամ իմպուլսային ազդեցությունների դեպքում, որոնք ունեն մակերեսային և շատ լոկալ բնույթ: Սրանք դիտարկում են որպես հիպոտեթիկ ծավալային տեխնոգեն ազդեցության արդյունք:

Մինչդեռ էկզոտիկ վառ երևակայություն ունեցող շառ-

Արհեստական երկրաշարժ. մի՞Ֆ, թե՛ իրականություն

լատանները գիտական հիմնավորումներ են առաջարկում հրապարակը ողողած բազմաթիվ աշխատանքներում:

Անցյալ դարի 80-ական թվականներին առաջ քաշվեց մի գաղափար, համաձայն որի պետք է մարվեր սկսվող երկրաշարժից առաջացած սեյսմիկ ալիքը: Ինչպե՞ս: Այն պետք է հանդիպեր արհեստականորեն առաջացրած սեյսմիկ ալիքին, որը թույլ չպետք է տար նրանց հասնել, ասենք, պաշտպանվող օբյեկտին՝ քաղաքին, ատոմակայանին և այլն:

«Ստեղծագործական այս միտքը» ավելի զարգացավ և առաջարկեց ավելի կատարյալ ու նոր մեթոդներ.

- Լիթոսֆերայում առաջացող երկրաշարժի հիպոկենտրոնի (ենթադրվող) էլեկտրական պոտենցիալը մշտական հավասար պահելը շրջակա միջավայրի հետ:

- Սպասվող ուժեղ երկրաշարժի օջախի ուղղությամբ մեծ արագությամբ տեղադրել պինդ մարմնի հոծ զանգ-



վածներ՝ օգտագործելով ինքնաթիռներ կամ հրթիռներ:

- Հրետակոծել այնպես, որ պատրաստվող ուժեղ երկրաշարժից առաջացող տեղական պարամետրերը (երկրաֆիզիկական, սեյսմաբանական) հնարավոր լինի մարել:

Միանշանակ ասենք՝ դիտարկվող գաղափարները, այն է՝ չեզոքացնել պատրաստվող ուժեղ երկրաշարժերը, չի կարող բավարարել նշված չափանիշներին, քանի որ դեռ այսօր բացակայում է երկրաշարժի օջախի մաթեմատիկական մոդելը, որի վրա կարողանային քանակապես հաշվարկել և կիրառել նշված եղանակները:

Չկա նաև որևէ հնարավորություն՝ համապատասխան փորձեր կատարելու համար:

Եվ իսկապես, մենք չենք կարող վերցնել երկրակեղևի 2-բացարձակ միանման բլոկներ, որոնք կունենան $10^2 \cdot 10^3$ կմ գծային երկարության չափեր և գտնվում են ջարդման նախաշեմին, և ընդունել բլոկներից մեկը, որպես հսկիչ, իսկ մյուսի վրա, նշված մեթոդներով, կատարել փորձեր: Ֆիզիկական իմաստը բավականին պարզ է, եթե պատկերացնենք, որ խզման գոտու տարբեր մասեր կարող են մոտենալ կրիտիկական սահմանին, որտեղ տեղի կունենա Կուլոն-Մորի սահելու պայմանները, անգամ եթե սկզբնական լարվածությունը հեռու է կրիտիկականից:

Դիտարկվում է նաև մի այլ գաղափար, երբ մեկ ուժեղ երկրաշարժը փոխարինվում է մի շարք թույլ երկրաշարժերով:

Ընդունենք, որ մենք կարողանում ենք իսկապես 100 %-ով պատրաստվող ուժեղ երկրաշարժը վերածել թույլ

7 բալանոց երկրաշարժերի: Բնականաբար, հարց է առաջանում, արդյո՞ք օգտակար է նման գործընթացը: Ե՛հ չէ, որ կարելի է ապահովել բնակչության անվտանգությունը: Ասենք պատրաստվող երկրաշարժի ուժը հավասար է $M=8$ -ի: Որպեսզի կուտակված էներգիան լիք-քաթափվի, անհրաժեշտ կլինի այն փոխարինել մոտ 30 երկրաշարժով, որոնք պետք է ունենան $M=7.0$ մագնիտուդայի ուժ, կամ 1000 երկրաշարժով, որոնցից յուրաքանչյուրի ուժը կլինի $M=6.0$:

Դուք պատկերացնում եք այն անվերջանալի սարսափը, որը կապի բնակիչը 3 տարի շարունակ, և յուրաքանչյուր օր մարդը պետք է լսի այն զարհուրելի ծայրը, որը առաջանում է ցնցմանը զուգահեռ: Մարդիկ կապրեն բակերում, քանզի վախը թույլ չի տա նրանց մնալ բնակարանում, կամ քնել: Ի՞նչ է լինելու նրանց բարոյափոփոխական վիճակը: Յուրաքանչյուր հարվածին կամ նրան հաջորդածին, մարդիկ կկորցնեն հավասարակշռությունը, կողմնորոշումը ժամանակի և տարածության մեջ, սրտխառնոցները, իսկ շատ հաճախ սիրտ-անոթային անբավարարությունները, որոնք կարող են ավարտվել մահվան ելքով: Այս կորուստները սովորաբար հաշվի չեն առնվում ֆինանսական և տնտեսական հաշվարկների ժամանակ: Հիմարարական փուլզուճների ժամանակ հաշվարկները նույնպես կոռեկտ չեն, քանի որ շինությունները և կառույցները ըստ նորմատիվների, հիմնականում դիմակայուն են առաջին ուժեղ հարվածին, իսկ հաջորդած թույլ հարվածները, ի վերջո, քանդում են շինությունները և բնակելի շենքերը:

Ամփոփենք: Մեր կարծիքով, արհեստական երկրաշարժ առաջացնելու առասպելը (մի՞Ֆ) ծնվեց այն ժամանակ, երբ սառը պատերազմի տարիներին երկու գերի-գոր տերություններ՝ Միացյալ Նահանգները և ԽՍՀՄ-ը, ուզում էին հակառակորդին վախեցնել նման սարսափելի զենք ունենալու կռվանով:

Ինչո՞ւ ենք ասում առասպել (մի՞Ֆ), որովհետև, զավոր. սինչև օրս համաշխարհային գիտությունը դեռևս անկարող է պատասխանել երկրաշարժ ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ ուժգնությամբ հարցին: Իսկ եթե այս հարցի պատասխանը չունենք, ապա անհեթեթ է հնչում արհեստական երկրաշարժի գաղափարը:

1945-ին Միացյալ Նահանգները միջուկային ռումբ նետեցին ճապոնիայի Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա: Այն երկրի, որտեղ ամեն օր մոտ 400 թույլ երկրաշարժ է գրանցվում: Այդ ռումբերը մեծ երկրաշարժ չառաջացրին, չեն առաջացնում նաև Սեմիպալատինսկում, նոր երկրում (ԽՍՀՄ-Ռուսաստան), Նևադայում (ԱՄՆ) և այլուր տարիներ շարունակ կատարվող բազմաթիվ ստորերկրյա միջուկային պայթեցումները: Սա օրինաչափ է, որովհետև երկրաշարժի օջախը սովորաբար գտնվում է 10-20 կմ խորության վրա, իսկ հզոր երկրաշարժի խզվածքի երկարությունը պետք է լինի առնվազն 132 կմ, և ոչ մի պայթեցման ալիք չի կարող հասնել օջախին, քանի որ պայթեցման հատվածի խորությունը կարող է լինել ամենաշատը 15-20 մետր:

Այնպես որ, պայթեցման կամ այլ եղանակով արհեստական երկրաշարժ առաջացնելու կամ այն թույլ երկրաշարժով փոխարինելու գաղափարը այսօր սին է և առասպել: Պետք է ուղղակի պատրաստ լինել դիմակայելու երկրաշարժի հարվածին բնակչության պատրաստվածության և սեյսմիկ կայուն շինարարության բարձր որակով:

Լեոնիդ ՀԱՆԿԵՐԴՅԱՆ
Երկրաֆիզիկական գիտությունների դոկտոր

Սուրճը բթացնում է տղամարդկանց

Արևմուտքի հոգեբանները հաստատել են, որ մեկ գավաթ սուրճ խմելուց հետո կանանց և տղամարդկանց վարքագիծը փոխվում է. թույլ սեռի ներկայացուցիչները առույգացնող ըմպելիքն ըմբռնելուց հետո բարդ իրադրությունում և սթրեսային վիճակներում գործում են ճշգրիտ և գրագետ, իսկ նույն այդ սուրճը, ընդհակառակը՝ խանգարում է տղամարդուն ընդունել ճիշտ որոշումներ:

Սույն վարկածի հետազոտության համար մասնագետները ընդգրկեցին 64 կամավորների: Նրանց բաժանեցին միասեռ երկու խմբերի՝ կազմված նույն տարիքի

32 անձանցից:


Նրանցից յուրաքանչյուրին սպասում էր 4 փորձություն՝ գլուխկոտրուկի լուծում, բանակցությունների վարում, հիշողության վիճակի թեստ և առաջին երեք փորձերի արդյունքների ներկայացում: Մինչև այս ծրագրի իրականացումը 16 զույգ ըմպեց սուրճ, իսկ փորձի մյուս մասնակիցները՝ կոֆեին չպարունակող ըմպելիք:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ սրճած կանայք 100 վայրկյանով ավելի արագ լուծեցին գլուխկոտրուկները, քան նրանք, որ սուրճ չէին խմել:

Պատկերը բոլորին այլ էր տղամարդկանց մոտ: Սուրճի սիրահարները գրեթե 20 վայրկյանով զիջեցին կանանց, իսկ հիշողության ստուգման թեստը նրանք պարզապես տապալեցին:

Այս կերպ գիտնականները ապացուցեցին, որ սուրճը բթացնում է տղամարդու մտավոր գործունեությունը: Այսինքն կարևոր միջոցառումներից առաջ տղամարդկանց խորհուրդ չի տրվում սուրճ խմել:

Իսկ ահա թույլ սեռի ներկայացուցիչների համար սուրճը շատ օգտակար է. 4 գավաթ սուրճը (օրական) կանխարգելում է արգանդի չարորակ ուռուցքը: Ըստ որում, սուրճը կարող է նույնիսկ կոֆեին չպարունակեն:



Գիտնականների հետևությունը ազդարարում է. «Եթե կինը երկար տարիներ օրը խմում է 4 գավաթ սուրճ, ապա մեկ գավաթ խմողների համեմատությամբ, 25 տոկոսով նվազում է չարորակ գոյացության վտանգը: Իսկ նրանք, որ օրական խմում են 2-3 գավաթ սուրճ, տոկոսով ավելի քիչ են ենթակա դեպրեսիայի (ընկճվածության), քան հազվադեպ սրճողները:

Մոպիկ Է աշխարհի յոթերորդ արարումը

Գիտնականները կանխագուշակում են աշխարհի հերթական վերջը՝ մոլորակի կենդանական աշխարհի վեցերորդ վերացումը, որից հետո Երկիրը կբնակեցնեն հրեշները:

Արարելով աշխարհը, Տեր Աստվածը մարդուն ստեղծեց ամենավերջինը: Եվ այլևս ոչինչ չավելացրեց իր ստեղծածին:

- Եվ իզուր, - տխուր արձագանքում է Բնության պահպանության համաժողովի նախագահ Սիմոն Ստյուարտը՝ վերջերս ճակատագրական Նագոյա քաղաքում կայացած գիտաժողովում: Աղամի և Եվայի սերունդները տառաջիկորեն պատերազմ են հայտարարել Աստծո արարածներին:

Վերջին 500 տարում ոչնչացել է կենդանի օրգանիզմների 900 տեսակ, որոնցից 80-ը՝ կաթնասուններ: Մինչդեռ առաջներում մեկ միլիոն տարում վերանում էր կենդանի էակների 2 տեսակ:

2004 թվականից կենդանի էակների տեսակները նախապատմական ժամանակների համեմատությամբ Երկրի երեսից սկսեցին անհետանալ հազար անգամ ավելի արագ, քան նախապատմական ժամանակներում, երբ մարդը բնության տիրակալը չէր: Փորձագետների գնահատմամբ առաջիկա 20 տարում տեսակների վերացման արագությունը կավելանա ևս 10 անգամ: Իսկ սա նշանակում է մեր փոքրիկ եղբայրների զանգվածային վախճան:


Երկրի վրա ապրող 5 միլիոն կենսաբանական տեսակներից (կենդանիներ, բուսականություն, պարզագույն օրգանիզմներ) երեք քառորդը կանհետանան առաջիկա 300 տարում, - կանխատեսում է էկոլոգ, աշխարհագրական գիտությունների դոկտոր Ալեքսեյ Միխայլով:

Տեսակների անհետացումը հազվագյուտ երևույթ չէ: Դարվիսի ուսմունքի համաձայն սա բնական ընտրության հետևանք է, որը վերացնում է թույլերին: Պրոֆեսոր Միխայլովը նշում է, որ առաջներում շատ տարածված էր աղետների տեսությունը, ըստ որի ժամանակ առ ժամա-



նակ տեղի է ունեցել կյանքի արարումը Երկրի վրա:

Ըստ այս տեսության կողմնակիցների Արարիչը ամենևին էլ չի հրաժարվել իր գործերից, և, դժգոհ լինելով իր աշխատանքի պտուղներով, երբեմն-երբեմն ոչնչացրել է «աբորիգեններին»: Օրինակ, ջրհեղեղի առասպելը այն մասին է, թե ինչպես Աստված պատժեց մարդկությանը:



Կան նաև այլ հին վկայություններ, որոնք վկայում են՝ աշխարհը բազմիցս մահացել է և վերածնվել: Հարավային Ամերիկայի հնդկացի ցեղերի առասպելներում ասված է. «Հին մարդիկ գիտեին, որ մինչև ներկա երկնքի և հողի երևան գալը, մարդ արարածն արդեն արարված էր, և կյանքը վերածնունդ է ապրել 4 անգամ»: Ինդուսների Սուրբ գիրք «Բիագավաթա-Պուրանան» պատմում է 4 աղետների մասին, երբ Երկրի վրա ամեն կենդանի էակ հայտնվել է ոչնչացման եզրին:

Ացտեկները՝ մայաների նախորդները, նույնպես հավատում էին, որ տիեզերքը գոյություն ունի մեծ շրջափուլերի շրջանակներում: Մայաները դրանք անվանում էին Արեգակների համակարգ: Նրանց ժամանակագրությամբ, հիմա ավարտվում է Հինգերորդ Արևի դարաշրջանը: Եվ ինչպես ազդարարում է ավանդույթը՝ կգա ջրհեղեղը: Նախկին դարաշրջանները ավարտվել են ոչ ավելի լավ: Եվ անգամ վեցերորդ Արևը, որը գալու է 2012 թվականին և տևելու է 300 տարի, ոչ մի լավ բան չի խոստանում:

Չարմանալի է, սակայն ացտեկների գուշակությունները, համահունչ են ժամանակակից գիտնականների կանխատեսումներին: Չէ՞ որ կենդանի էակների այսօրվա վերացումը, որի մասին խոսում են բնապահպանները, հաշվով վեցերորդն է: Եվ այդ գործընթացն իր գագաթնակետին կհասնի 300 տարի հետո: Հիշեցնենք, որ վերջին 540 միլիոն տարում մոլորակի պատմության մեջ տեղի են ունեցել 5 մեծագույն աղետ-հեղաշրջումներ՝ մի տեսակ աշխարհի վերջ Երկիր մոլորակի այդ ժամանակվա բնակիչների համար:

- Ինչպես հետազոտությունները հաստատում են, կենդանի էակների անհետացումը այդ 6 շրջաններում տեղի է ունեցել բացառապես բնության մեղքով, - նկատում է պրոֆեսոր Միխայլովը: Սակայն կենդանի էակների տեսակների փոխարեն հայտնվել են ուրիշները:

Ներկայիս 6-րդ աղետը ամբողջապես պայմանավորված է մարդ արարածի վնասակար գործունեությամբ: Գուցե՞ այս անգամ էլ մահանում են այն օրգանիզմները, որոնք անկարող են հարմարվել մարդու ստեղծած տեսնողեն քաղաքակրթությանը: Եվ ուրեմն մնալու են միայն այն տեսակները, որոնք կենդանի կմնան Ֆուկուսիմայի վթարից հետո, Մեքսիկական ծոցը նավթով հեղեղելուց հետո և կամ մոլորակի գլոբալ տաքացումից և ոչ պակաս գլոբալ սառչելուց հետո:

Մի խոսքով, սպասվում են մոտանումներ: Եվ ինչպես իր ժամանակին հոմո սափիենսը իշխող դիրք գրավեց դինոզավրերի վախճանից հետո, այնպես էլ մենք հարկադրված ենք լինելու սեղմվելու և տեղներս գիցելու աշխարհի նոր տիրակալներին՝ գերդիմացկուն հրեշներին:

Սվետլանա ԿՈՒՋԻՆԱ

ԵՐԿՐԱԳՈՒՆԸ

Ամերիկյան կմիանա Ասիային

Ելլի համալսարանի (ԱՄՆ) գիտնականները կարծում են, որ 50-200 մլն տարի հետո Հյուսիսային բևեռի շրջանում բախվելու են Ամերիկա և Եվրասիա մայրցամաքները, կազմելով նոր գերմայրցամաք՝ Ամասիա: Մասնագետները դրա առաջացումը պայմանավորում են Հարավային Լիթոսֆերային սալերի տեկտոնիկայի առանձնահատկություններով:

Հետազոտության մեջ նշվում է, որ գերմայրցամաքին կմիանան նաև Աֆրիկան և Ավստրալիան: Այս բոլոր տվյալները ստացվել են մոլորակի տարբեր կողմերի գեոմագնիսական ցուցանիշների վերլուծության հիման վրա, նշում է BBC-ն:

Մասնագետների ստեղծած հատուկ մոդելի վրա սկզբում միաձուլվում են Հյուսիսային և Հարավային Ամերիկաները, հետո անհետանում է Կարիբյան ծովը: Ապա Ամերիկյան միանում է Ասիային, հետո՝ Աֆրիկային և Ավստրալիային: Հեռու է մնում միայն Անտարկտիդան:

Տվյալ տեսությունը հերքում է այն վարկածները, թե վիթխարի մայրցամաքները կանոնավորապես միանում են միևնույն կետում: Նոր հետազոտությունը անչափ կարևոր է Երկրի անցյալի ճշգրիտ ընկալման համար, կարծում է բրիտանացի երկրաբան Դևիդ Ռոտտերին: Ամասիայի վարկածը կօգնի ուսումնասիրել ներկայիս բնական և կլիմայական պրոցեսները:

Շատ գիտնականներ կարծում են, որ մոտավորապես 300 մլն տարի առաջ մոլորակի վրա գոյություն է ունեցել Պանգեա գերմայրցամաքը:



ԺԴԻՏՆԵՐ

Ամուսնացած մի տղամարդ բողոքում է կնոջից՝ ամուսնական հարաբերությունների հայտնի մի մասնագետի.

- Ես ի՞նչ անեմ, հարգելի պարոն: Կինս օրագիր է պահում, որտեղ գրի է առնում ընտանեկան մեր անցուդարձը, արարքները: Ըստ որում՝ ամենայն բժախնդրությամբ:

- Բայց դրանում ոչ մի արտառոց կամ զարմանալի բան չկա: Հիմա շատ կանայք են օրագիր պահում:

- Այո, պարոն, սակայն իմ կինը օրագրի գրառումները կատարում է նաև այն օրերի համար, որոնք դեռ գալու են:



Ամուսինները տաքացած վիճում են.

ԿԻՆԸ - Ես արդեն հասկացա, դու կատարյալ և ինքնահավան եսասեր ես. իմ կինը, իմ բնակարանը, իմ աշխատավարձը: Իմ, իմ, իմ... Իմացիր, ոչ մի բան քոնը չէ: Կա մի ճշմարտություն. ոչ թե իմը, այլ՝ մերը, մերը, մերը: Հասկացա՞ր: Հա, իմիջիայլոց, մի ժամ է այդ ի՞նչ ես փնտրում պահարանում:

ԱՄՈՒՄԻՆԸ - Մեր անդրավարտիքը, սիրելի տիկինս:



- Ասեմ ձեզ, նոր սերունդը ոչնչով չի տարբերվում մերից: ասում է հոգեբանը:

- Նրանք էլ մեծանում են, գնում դպրոց, ծխում իրենց առաջին սիգարետը: Նույնպես փախչում են տնից, սիրահարվում ամուսնանում, երեխաներ ունենում: Միայն թե հակառակ հերթականությամբ:



Եգիպտոսի հյուրանոցներից մեկում գրոսաշրջիկը դիմում է սպասավորին.

- Խնդրում եմ, վաղը ուղիղ ժամը 5-ին արթնացրեք ինձ:

- Շատ բարի, պարոն: Միայն թե խնդրում եմ ժամը 4 անց կեսին զանգահարեք ինձ և հիշեցրեք: Թե չէ, Աստված չանի, մեկ էլ տեսաք մոռացա:



- Բարի օր, Հարութ քան, ի՞նչ է, չճանաչեցիր ինձ:

- Ընը, գիտեք, չեմ կարողանում հիշել:

- Ուրեմն տեսողական հիշողությունդ լավ չի, Հարութ քան:

- Չէ, ոնց որ թե հիշողությունս լավ չէ անունների գծով: Ես կարծում էի, որ իմ անունը Պողոս է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը, ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը և Արցախի պետական համալսարանը 2012թ. հունիսի 24-ից հուլիսի 1-ը կազմակերպում են միջազգային գիտաժողով «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով:

Գիտաժողովի հիմնական ուղղություններն են. Հայ բանասիրական ժառանգության պահպանման և զարգացման արդի հիմնախնդիրները:

Հայ պատմագիտությունը երեկ, այսօր և զարգացման գերակայությունները:

Արվեստ և ճարտարապետություն:

Նախատեսվում է գիտաժողովի աշխատանքային օրերից 2-ը կազմակերպել Երևանում (ՀՀ ԳԱԱ-ում), 2-ը՝ Ստեփանակերտում (Արցախի պետական համալսարանում): Երևանից Ստեփանակերտ ճանապարհին և Արցախում կկազմակերպվեն այցելություններ դեպի տեղի պատմամշակութային հուշարձաններ:

Միջազգային գիտաժողովի մասին համապարփակ տեղեկատվություն կարելի է ստանալ armheritage.sci.am կայքից:

Գիտություն

Գլխավոր խմբագիր
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24ր, հեռ. 56-80-14:

Հասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Մտորագրված է փապարության՝

19. 03. 2012 թ.: Տպաքանակը՝ 500:

"ГИТЮТОН" ("Hayka") газета НАН РА